Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ԹԻՎ ԹԻՎ 39-Ա, 40-Ն, 42-Ա ԵՎ 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 39-Ա որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածում առկա են կրճատ գրառված բառեր (ՎԱՐՉ. ԲՅ.): Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Թիվ 40-Ն որոշումը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին՝ այն է համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ սույն օրենքով սահմանված հավասարակշռությունը:

Սակայն ըստ համայնքի ավագանու որոշման այն խախտվել է և չեն պահպանվել ավելացման և պակասեցման չափաքանակները:

Թիվ 42-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածում «հեկտար» բառն անհրաժեշտ է գրառել լրիվությամբ:

Թիվ 43-Ա որոշման նախաբանում «599» բառից հետո գրառված «որոշմամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «որոշման 1-ին կետով» բառերով:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
14.08.2020թ.